Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ՍՅ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Սյունիքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 07.01.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,

այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 42 շահառուի. Իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում, ինչի հիման վրա իրականացվել է 23 ուղղորդում: Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, ժամանցային, հիշողության ամրապնդմանն ուղղված խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ, որոնց մասնակցել է 42 շահառու.
  - շյուղագործության խմբակ.
  - ասեղնագործության խմբակ,
  - առողջ ապրելակերպի խմբակ:

  Մշակութային միջոցառումների շրջանակներում կազմակերպվել է թվով 12 միջոցառում, որին մասնակցել է 42 շահառու.
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է նկարչաթերապիայի 26 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 35 ):
- Սննդի տրամադրման շրջանակներում կենտրոնում յուրաքանչյուր օր 2 սննդային ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները կցվել են եռամսյակային հաշվետվությունների մեջ:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի ՏԿ- ի սոցիալական աշխատողը մասնակցել է ՄՍԾՏԿ-ում կայացած համակարգող խորհրդի նիստերին, որտեղ քննարկվել են համայնքի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում չներառված, սակայն աջակցության կարիք ունեցող շահառուների դեպքերը, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրման ենթակա դեպքերը:
Հաշվետու ժամանակահատվածում Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է «Գործընկերություն հանուն Սյունիքի բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրերի շրջանակներում կազմակերպված՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենսդրության և «Տեղական սոցիալական ծրագրերի մշակման գործընթացը» տեսագործնական դասընթացներին, որոնց ընթացքում քննարկվել է գործող օրենքի կարգավորման շրջանակը, սկզբունքները, ինչպես նաև սպասվող փոփոխությունները:
Կապանի ՏԿ-ի սոցիալական աշխատողը մասնակցել է «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին, որի ընթացքում ուսումնասիրվել է սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությունը, նպատակներն ու խնդիրները: Քննարկվել են սոցիալական դեպքերի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և ընթացիկ աշխատանքները:
Մասնակցություն է եղել նաեւ Կապանում կազմակերպված «Ռոնի տեղահանված անձանց շրջանում ականներից տուժածների հետ հարցազրույցի վարում, տվյալների հավաքագրում» թեմայով դասընթացին, ինչպես նաև Կապանի թիմը ակտիվ մասնակցել է Ալվերանում կազմակերպված թիմ բիլդինգին:

Ձևաչափ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Հ/Հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 38 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 12 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 11 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 30 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 40 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 5.1 | առողջ ապրելակերպ | 20 |
| 5.2 | ջուլագործության խմբակ | 21 |
| 5.3 | ասեղնագործության խմբակ | 8 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 37 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 9 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան «16» 12.2024թ

[illegible]